

25.889

ՅԵԼ ԳԵՂՋԿՈՒՅՈՒ  
Լ ԳՐԱԴԱՐԱՆ № 2



Ա. ԱԼԻՔՈՒՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՀԻՄ  
ՅԵՎ  
ԿՈՂՊԵՐԱՑԻԱՆ

ՀԱՅԿՈՈԹԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ

1929

25889

30 SEP 2013

15 JAN 2010

ԲԱՆՎՈՐՈՒՅՑՈՒ ՅԵՎ ԳԵՂԶԿՈՒՅՑՈՒ ԿՈՌԵՐԱՏԻՎ ԳՐԱԴԱՐԱՆ

334:396

0-56

۱۷۰

Ա. ԱԼԵՇԻՆԻ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

3 t 4

## ԿՈՂՊԵՐԱՑԻԱՆ



1998-57

1929 B.

1.

ԿՈՂՊԵՐԱՑԻԱՆ ԲԱՆՎՈՐՈՒՅՈՒ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒՅՈՒ  
ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻՑ ՄԵԿՆ Ե

Խորհրդային իշխանության որով բանվո-  
ռուհու ու չքավոր գեղջկուհու իրապես ազատա-  
գրման հիմնական ուղիներից մեկը կողպերա-  
ցիան եւ:

Քաղաքում և գյուղում կողպերացիան այժմ  
այնպիսի խոշոր սոցիալական հեղաշրջում ե կա-  
տարում բանվորի և գյուղացու տնտեսության  
մեջ, վոր հիմնովին փոխում ե նրա հին կեն-  
ցաղը:

Բնական ե, վոր այս դեպքում առաջին հեր-  
թին շահում ե աշխատավորուհին: Ամեն մի նոր  
վոքք բարեփոխում այդ ուղղությամբ իրապես  
ազատագրում ե բանվորուհուն ու գեղջկուհուն  
ընտանեկան այն ծանր լծից, վոր նա ստացել  
ե բուրժուական հասարակակարգից:

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ  
ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅԱՆ,  
ՄԱՐՔՍԻ ՓՈԼ. № 29  
ԳՐԱՌԵՊ. № 1834Բ.  
ՏԻՐԱԺ 3000

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՌԵՐԱՑԻԱՅԻ ՍԿԻԶԲԸ

Այս ինչու Հայաստանում կոռպերացիան նույնպես ծնունդ ե առնում այնպիսի վայրերում, վորտեղ կապիտալիզմը ավելի շուտ ե ներգործում (սպառկոռպերացիայի պիոները՝ Մեղքին—1901թ. և գյուղատնտեսական կոռպերացիայի՝ Վարանցովկան 1907թ.), բայց հիմնականն այն ե, վոր նա չեր ծառայում բանվոր ու չքավոր գյուղացու շահերին: Քաղաքում կոռպերացիան գտնվելիս ե յեղել բարձր խավերի մեծ և փոքր չինովնիկների իրավասության տակ, իսկ գյուղում տերն ու տնօրենը յեղել ե վաշխառուն, կուլակը և տերտերը: Գյուղատընտեսական վարկային կոռպերացիան, վորը կազմակերպված ե յեղել ընդհանուր յերաշխիքի հիմունքներով, ծառայել ե բացառապես ունեոր գյուղացիության շահերին:

3.

## Հ'ՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՇԻՆ ՄԻԱՄԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐՈՒՄ

Կոռպերացիայի քաղաքական ու տնտեսական կաշկանդված դրությունը վոչնչով չեր

նպաստում բանվորունու և գեղջկունու իսկական աղատագրման գործին: Ընդհակառակը, կոռպերացիան վերջին հաշվով ստեղծում եր աշխատավորունու համար շահագործման նորանոր ձեռք:

Այդպիսով Հայաստանի աշխատավոր կինը միապետության որոք կոռպերացիայի մասին գաղափար անգամ չի ունենում. Քաղաքացիական ձանք գծի տակ ստրկացած՝ նա իր ոջախից բացի՝ վոչնչ համարյա չի տեսնում: Նա նույնպես չեր կարող գիտակցել, վորովնետև ապրում եր խավարի, անկուլտուրականության միջավայրում: Մյուս կողմից մթնեցնում եր նրա միտքը հոգեորականությունը և մոլորեցնում իսկական աղատագրման ճանապարհից: Բոլորից ծանր եր բանվորունու և գեղջկունու լուծը տնտեսության մեջ: Զքավորությունը, անգործությունը, ստիպում եր բանվորունուն, բացի տնային բուռը զբաղմունքներից, աշխատել և դուրսը: Նրա աշխատանքը դրսում ամբողջովին շահագործության եր մատնված: Նրա վիճակը վոչնչով չեր թիթեանում:

Ծնտեսական դրությունն ավելի վատթագանում եր, վորովնետև ընտանիքը և տնտեսությունը մնում եյին անխնամ: Զկային բանվո-

բուհու համար այնպիսի ձեռնարկներ, վոր ու ժամանդակեյին նրա կենցաղի բարելավմանը, Մանկապարտեզներ՝ մանկատներ, ճաշարաններ, լվացարաններ թենգետ գոյություն ունեյին քաղաքներում, բայց ոչ քանզ բանվորուհու կյանքը լավացնելու, բարելավելու համար չեյին։ Բանվորուհին յեթե պարապում եր արհեստով (կարու ձե, ձեւագործ և այլն), նրա տաժանակիք աշխատանքը վարձատրվում եր չնչին գումարով և նրա արժեածող ժամանակի ընթացքում մեռնում էլք։ Բանվորուհու չնչին յեկամուտի կեղեքողը քանակությոր առեւտրականն, միջնորդը և չարչին եք։

Զքավոր գեղջկուհու դրությունն ավելի ծանր երւ կալեկտիվ տնտեսություններ ու կյանք գոյություն չունեյին։ Հիմնականը նա յեր վոր Հայաստանի հետամնացությունը, գյուղատնտեսական մթերքների չափազանց նախնական ձների վերամշակման ամբողջ ծանրությունն ընկած եր գեղջկուհու վրա։ Տրակառի, սեպարատորի և զանազան գյուղատնտեսական գործիքների փոխարեն՝ նա ծանր խնոցից, բահից, քլունգից հեռու չեր գնում, և չնայած նա տաժանակիք աշխատանք եր կատարում առավոտից մինչ յերեկո, բայց հետեանքը լինում եր շատ չնչին։ Գեղջկուհին պարապում եր նաև

տնայնագործական արհեստներով—մեծ մասամբ գորգագործությամբ, ջուլհակությամբ, ձեռագործությամբ, սակայն միջնորդ-առեւտրականը, վոր հանդես եր գալիս այդ ապրանքի գնողը, խաբում եր կնոջը, աննշան գումարով գնում եր նրա արտադրանքը և վաստակի մեծ մասը վերցնում իրեն։ Գյուղում բոլորից շատ կեղեքում եր գեղջկուհուն մանավանդ չարչին։ Յեթե գյուղում նույնիսկ գոյություն ունենար սպառղական կոռպերատիվ, բայց և այնպես գեղջկուհին իրավունք չուներ գնալ խանութ և գնումներ կատարել։ Հին կենցաղի նախապաշարումները թույլ չեյին տալիս նրան այդ, մանավանդ թրքուհիներին։ Այս նախապաշարումը խոշոր չափով նպաստում եր չարչու առեւտրական շրջանառության զարգացմանը, նա սան եր գալիս տները, հավաքում եժան գնով ձու, պանիր, յուղ, կարագ և այլ գյուղատնտեսական մթերքներ, մի քանի անգամ ավելի թանգ վաճառելով նրանց կոճ, ասեղ, նավթ և այլն։

Մանավորապես Հայաստանում, ցարական ու դաշնակցական կարգերում, գյուղացիական տնտեսության ծայրաստիճան քայլքայման, յերեթի ընդհանուր չքավորության ու մշտական սովի, ազգամիջյան յեղբայրասպան կոփմսերի, համատարած տղիտության ու խավարի հետեան-

քով՝ աշխատավորուհիների դրությունը չափա-  
ղանց աննախանձելի յեր. նրանց կամքը՝ ճնշված,  
նրանց աշխատանքն արհամարված, նրանց կյանքն  
ու կենցաղը՝ վատթար ու ասիական պայման.  
ների մեջ կաշկանդված, Հայաստանը վերածվել  
և վորբերի, այրիների ու անապաստանների  
յերկիր.

4.

## ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԱՏԱԳՐԵՑ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՅՈՒՆ

Միայն Հոկտեմբերյան հեղափոխությունն եր,  
վոր աշխատավոր կնոջ իրապես ազատագրման  
հարցն իր հիմնական խնդիրներից մեկը դարձեց: Չափազանց ճիշտ բնորոշեց ընկ. Լենինը  
բանվորուհու ու գեղջկուհու դերը սոցիալիստա-  
կան շինարարության մեջ: «Խորհրդային իշխա-  
նության գործը կտարվի մինչեվ վերջը, յերբ  
նրա մեջ անմիջական մասնակցություն ցույց  
տան միլիոնավոր ու միլիոնավոր բանվորու-  
հիներ ու գեղջկուհիներ»: Յեվ իրապես. ար-  
դյունաբերության, գյուղատնտեսության, կո-  
ռոպերացիայի և այլ բնագավառներում կատար-  
վող բոլոր նվաճումների հիմնական առարկանե-  
րից մեկը բանվորուհու ու գեղջկուհու ստեղ-

ծագործական աշխատանքն եւ: Խորհրդային հա-  
սարակական ու կոռպերատիվ կազմակերպու-  
թյունները գեռես հակա անելիքներ ունեն աշ-  
խատավորուհիների զրջանում: Մասնավորապես  
կոռպերացիան, վոր խոշոր դեր ունի կատարելու-  
այդ ուղղությամբ, դեռ ամբողջովին չեւ մաս-  
սայականացրել կնոջ ակտիվացման ու կո-  
ռոպերացման գաղափարը: Այդ իսկ պատճառով  
կոռպերատիվ շինարարության մեջ բանվորու-  
հու և գեղջկուհու մասնակցությունը դեռ թույլ  
եւ: Այնուամենայնիվ հիմնականն այն եւ, վոր  
Խորհրդային իշխանության որոք կոռպերացիան  
հանձինս նրա ղեկավար կոմունիստական կու-  
սակցության՝ տանում եւ ճիշտ ու վորու քաղա-  
քական գիծ, վոր ծառայում եւ աշխատավոր դա-  
սակարգի շահերին: Կոռպերատիվ ձեռնարկու-  
թյուններն այժմ (կոլխոզները, կոմունաները,  
սպառկոռպները, վարկային և գյուղատնտեսական  
այլ ընկերությունները, տնայնա-արհեստագոր-  
ծական արտելները, թեյարանները, փոերը, ճա-  
շարանները, մանկապարտեզները և այլն) խոշոր  
չափով նպաստում են աշխատավորությանը, և  
առաջի հերթին բանվորուհուն ու գեղջկուհուն,  
նրանց իրապես ազատագրելով սնտեսական նըն-  
ումներից:

ԲԱՆՎՈՐՈՒՅՈՒՆ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒՅՈՒՆ  
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՊԱՌԿՈՌՊԵՐԱՑԻԱՅՈՒՄ

Այժմ կանգ առնենք այն խնդրի շուրջը, թե վոր չափով մեզ հաջողվել ե իրոք մասնակից դարձնել աշխատավոր կոռջը կոռպերացիայի հիմնական բոլոր բնագավառներում և ինչ անելիքներ ունենք հետագայում:

Սպառկոռպերացիան, վորպես ավելի մասսայական, վորպես ավելի ամուր հիմքերի վրա դրված կազմակերպություն, տարել ե բանվորունիների ու գեղջկունիների ըլջանում վորոշ հասարակական աշխատանք:

Առանձնապես վերջին տարիներին Հայկոպի կուլտ.բաժինն այդ ուղղությամբ տանումնե հատուկ ու ծրագրած աշխատանքներ: Մշակված են կանանց կոռպերացման առանձին ձևեր և կուլտ.կենցաղային ձեռնարկումների ծրագիր: Առանձնապես ուշադրություն ե դարձված այն կազմակերպչական ձևերի վրա, վորոնց միջոցով պետք ե կոռպերացվեն ու ակտիվացվեն աշխատավորունիները:

Հայկոպը տանում ե ցանցում խոշոր կուլտ.կենցաղային աշխատանք: Կոռպ.ցանցում այժմ

գոյություն ունեն 40 մանկապարտեզներ և մանկական հրապարակներ: Մի շարք սպառկոռպներում կան չմոր և մանկան» անկյուններ: Տարրական անգրագիտության վերացման համար 150 տեղում կազմակերպված են խմբակներ, վորտեղ սովորում են մոտ 5000 հոգի, վորից 50 տոկոսը կանայք են: Կոռպանգրագիտության վերացման համար կան 60 խմբակ, վորի 15 տոկոսը կազմում են կանայք: Գեղջկունու ազատագրմանը վորոշ չափով նպաստում ե կինոն, և ռադիուլնկերությունները, վորոնք Հայկոպի կուլտ.բաժնի կողմէց կազմակերպվում յեն բոլոր գավառներում: Թրքական գյուղի կոռպ.անդամները հրճվանքով պատմում են թե ինչպես «Բախտավոր չերվոնեցի» ցուցադրման ժամանակ թրքունիները հանել են իրենց չադրաները, կոռպ.կինոն մուտք գործելով գյուղում նպաստում ե գեղջկունու ազատագրման գործին, աստիճանաբար վերացնելով հին կենցաղը և ստեղծելով նոր կոլլեկտիվ կյանք ու կենցաղը:

Այժմ տեսնենք սպառկոռպերացիայում կանանց մասնակցությունն ինչ թվերով ե արտահայտվում:

Աշխատավորուհիների մասնակցությունը  
սպառկոռպերացիայում

1926—27 տ. տ.

Տոռպերացվել են	5320 հ.	կամ	5,90/0-ով—	8226 հ.	կամ	5,40/0-ով			
Մաս.	են	կերպնա.	915 հ.	կամ	120/0-ով—	1055 հ.	կամ	10,50/0-ով	
Վարչ.		Կազմ.	մեջ	20 հ.	կամ	6,40/0-ով—	27 հ.	կամ	6,50/0-ով
Վերսութ.	հանձնա.			6 հ.	կամ	30/0-ով—	9 հ.	կամ	3,50/0-ով
Խանութ.	հանձնա.			40 հ.	կամ	100/0-ով—	57 հ.	կամ	11,50/0-ով
Աշխատակիցներ				22 հ.	կամ	4,20/0-ով—	33 հ.	կամ	4,50/0-ով

Բերածութվերից յերեսում ե հետևյալը, վոր սպառկոռպերացիայում, չնայած դանդաղ, բայց և այսպես աճում ե աշխատավորուհիների կոռպերացման տոկոսը։ Հետզհետե ավելացել ե նաև կանանց մասնակցությունը սպառկոռպեների ավարաներում։ Առանձնապես կանանց մասնակցությունը համեմատաբար մեծ ե խանութային հանձնաժողովներում և մասամբ ել վարչությունների մեջ։

Բայց կինը գեռես շատ չնշին մասնակցություն ունի կոռպաշտակիցների կադրերի մեջ։ Այդ շատ հասկանալի ու պարզ եւ հայաստանի աշխատավորուհին գեռես այնքան չի ակտիվացել, գեռես հասարակական աշխատանքին այնքան չի սովորել, վորպեսզի կոռպերացիայի ասպարիզում ավելի մասնակցություն ունենա։

6.

ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՊԱՏԿԵՐԸ

Ահա ինչ թվով ե ընդգրկված սպառկոռպերացիային աշխատավոր կինը և վորպիսի մասնակցություն ե նա ունեցել թէ անցյալ վերընտրական կամպանիայի ընթացքում և թէ կոռպերավար մարմիններում։ Համեմատելու համար բերված ե 1926—27 և 1927—28 տնտեսական տարիների տվյալները։ (Տես տախտակ № 1. ավելի հին տվյալներ գոյություն չունի, վորովհետեւ անցյալ տարիներում կանանց աշխատանքների հաշվառում չի կատարվել)։ Այդպիսով մենք տեսնում յենք, վոր կանանց կոռպերացման տոկոսն ավելացել ե մեկ և հինգ տասերը դական տոկոսով (1,5 տոկոսով), նույն չափով ել ավելացել ե նրանց մասնակցությունը վերընտրական կամպանիայում և խանութային հանձնաժողովներում։ Շատ չնշին տոկոս ե ավելացել վարչության և վերստուգիչ հանձնաժողովների կազմի մեջ կանանց թիվը։ Սա բացատրվում ե մի կողմից այն հանգամանքով, վոր կադրեր կանանց միջից պատրաստվում են դժվար ու դանդաղ, մյուս կողմից ել կնոջ ա-

Աաջքաշման հարցը հաճախ պատահական բնույթ  
ե կրում:

Առաջ քաշված թեկնածուն լավ չի ուսում-  
նասիրվում համապատասխան կազմակերպու-  
թյունների կողմից, վորի շնորհիվ և հետևանքը  
լինում ե վոչ դրական: Մեր սպառկոռպները քա-  
ղաքում և մանավանդ գյուղում ունեն բազմա-  
թիվ թերություններ, վոր ամենուրեք բանվո-  
րուհու ու գեղջկուհու ակտիվացմանը խանգա-  
րում են: Մենք գիտենք, վոր հաճախ վարչու-  
թյան անուշադիր վերաբերմունքի շնորհիվ բա-  
ցայում են կոռպերատիվում ամենահարկա-  
վոր մթերքներն, ինչպիսին են՝ նավթը, աղը, շա-  
քարը, ոճառը, լուցին և այլն: Այս կարեոր  
մթերքների փոխարեն պատահում ե, վոր տա-  
րիներով դարակներում փթում են մի շարք  
ապրանքներ, վորոնց կարիքը գյուղը բոլորովին  
չի զգում: Սա կարեոր հարց ե, վորովհետեւ ա-  
ռաջ ե գալիս այն բացից, վոր տնտեսուհին չի  
մասնակցում սպառկոռպի առևտրական գործո-  
նությունների մեջ: Մեր գյուղի սպառկոռպներն  
այնքան կեղաստ են, անկանոն, փոշու մեջ կո-  
րած, վոր շատ դեպքում չեն տարբերվում մաս-  
նավոր խանութից, իսկ վորքան ապրանք ե տա-  
րիների ընթացքում մկների բաժին դառնումը  
Թվում ե թե աննշան, բայց, յեթե մանրա-

մասնորեն հաշվի առնենք՝ կտեսնենք, վոր  
այդ գումարը կհասնի հազարների: Ահա այստեղ  
նույնպես զգացվում ե կնոջ բացակայությունը,  
և սպառկոռպի այս բոլոր թերություններից  
տուժում ե առաջին հերթին տան տնտեսուհին:  
Անտնտեսավարության հետևանքով շատ անդամ  
ապքանքը թանգանում ե, վարչության անտար-  
բերության շնորհիվ բանվորուհու ու գեղջկու-  
հու խմորը թթվում ե առանց աղի, կարը մնում  
կիսատ՝ առանց թելի, լվացքը՝ առանց սապոնի  
և այլն: Տղամարդը հեռու յե այս բոլորից, միայն  
կինն ե նկատում այդ բացերը, վորոնք սպառ-  
կոռպի աշխատանքների հաջողության խանգա-  
րում են: Ահա ինչու անհրաժեշտ ե սպառկոռպի  
ամենորյա աշխատանքների մեջ մասնակից դարձ-  
նել աշխատավոր կնոջը, ուժեղացնելով նրանց  
մասնակցությունը կոռպերատիվների ղեկավար  
մարմինների մեջ:

7.

## ԳԵՂԶԿՈՒՀԻՆ ԳՅՈՒՂԿՈՌԵՐԱՑԻԱՅՈՒՄ

Գյուղատնտեսական կոռպերացիան դեռևս  
նոր ե ծավալվել Հայաստանում, բնական ե,  
վոր կնոջ կոռպերացման ասպարիզում ավելի  
հետ ե մնում սպառկոռպերացիայից: Հետաքըր-

քըրական ե այստեղ գեղջկուհու դերը գյուղկու-  
ռպերացիայի բոլոր ճյուղերում և նրա համեմա-  
տական աճումը։ Այդ առթիվ բերվում ե սույն  
համեմատականը (տախտակ № 2)։

Տախտակ № 2

Գեղջկուհիների Սասնակցությունը գյուղա-  
Տնտեսական կոռպերացիայում

1927 թ.	կոռպերացվել են	759	հոգի կամ	3,10/0
1928 թ.	»	3428	»	5,30/0

Վարչության կազմում

1927 թ.	6 հոգի — 0,90/0
1928 թ.	34 հոգի — 5,20/0

Ըստ կոռպերատիվների


Վարկ. կոռպ. 27 թ.	կոռպերացվել են	320	հ. — 20/0
»	» 28 թ.	»	1575 » — 4,50/0
Կաթնարտելներում	»	»	126 » — 2,80/0
»	28 թ.	»	560 » — 70/0
Բամբ. այգ. ընկ. 27 թ.	»	»	288 » — 14,70/0
»	» 28 թ.	»	755 » — 5,20/0
Մետաքս. ու մեղ. 27 թ.	»	»	18 » — 5,60/0
»	» 28 թ.	»	377 » — 250/0

Գյուղկոռպերացիայի մեջ կնոջ կոռպերա-  
ցումը զգալի աճում է՝ յեթե 3,2 տոկոսից հաս-  
նում է 5,3, իսկ ավելի շատ ե աճել ընտրական

մարմիններում (0,9 տոկոսը հասել ե մինչեւ  
5,2 տոկոսի)։

Այսպիսով մեր գեղջկուհին այսոր սոցիա-  
լիստական շինարարության նոր ձևերի կառու-  
ցողներից մեկն ե հանդիսանում գյուղում։ Նա-  
ուրախությամբ բաժանում ե աշխատավորու-  
թյան հետ այն բոլոր դժվարությունները, վոր  
սկզբնական շրջանում ծառանում ե նրա առաջ։  
Զքավոր գեղջկուհին, վոր միանգամայն զուրկ ե  
գյուղատնտեսական գործիքներից և ֆիզիքական  
ծանր ուժից, վոր պահանջվում եր նրա տնտե-  
սության զարգացման համար, այսոր միակ  
գրկությունը գտնում է կոռպերացիայի մեջ։  
Յեվ դա միանգամայն հասկանալի յէ։ Նա տես-  
նում ե, վոր այժմ կոռպերացիան իրոք ծառա-  
յում ե իր շահերին, չքավորական ֆոնդերի  
միջոցով անդամագրվում են իրեն, առանց  
վորեւ յերաշխավորության (ունեօրի) բաց են  
թողնում գյուղ գործիքներ ու համապատաս-  
խան միջոցներ՝ բարձրացնելու իր տնտեսու-  
թյունը։

Գեղջկուհու իսկական ազատազրման իսկ  
այն ձևերը կոմունաները և կոլխոզներն են,  
վորոնց շուրջը հետզհետե համախմբվում են  
բոլոր աշխատավոր կանայք։ Քայլացնելու աշխատավոր կանայք։



ԳԵՂՋԿՈՒՅԻՆ ՅԵԼ ԲԱՆՎՈՐՈՒՅԻՆ ՏՆԱՅՆԱԳՈՐ-  
ԾԱԿԱՆ ԿՈՌՊԵՐԱՑԻԱՅՈՒՄ

Տնայնա-արհեստագործական կոռպերա-  
ցիան, վորը դեռևս մի քանի տարվա գոյու-  
թյուն ունի Հայաստանում, արգեն բավակա-  
նաշափ ընդգրկել ե իր շուրջը բանվորուհուն  
ու գեղջկուհուն (տես տախտակ և 3):

Տախտակ և 3

Տնայնա-արհեստագործական կոռպերացիայում  
Կոռպերացված են 1928 թ. 1154 հ. կամ բոլոր անդամների 45,80/<sup>0</sup>  
Հումարով մարմ. աշխ. են 20! կամ բոլոր աշխատադիրի 57,10/<sup>0</sup>

Ըստ արժեքի ներկայութեան

Զուլհակների	253 հ.	կամ	63,20/ <sup>0</sup>
Գորգագործների	781 հ.	»	96,20/ <sup>0</sup>
Դերձակների	23 հ.	»	24/ <sup>0</sup>
Բրդի մշակման	2 հ.	»	13,30/ <sup>0</sup>
Այլ ընկերութ.	51 հ.	»	60/ <sup>0</sup>

Մենք տեսնում ենք, վոր այսոր Հայաս-  
տանում 1164 բանվորուհի ու գեղջկուհի իրենց  
քրտինքով ձեռք են բերում իրենց ապրուստը  
կազմակերպվելով տնայնա-արհեստագործական  
միության շուրջն ու տանելով ստեղծագործա-  
կան աշխատանք: Այլևս նրա աշխատանքը չ-

շահագործվում վաշխառուի, միջնորդ-առևտրա-  
կանի կողմից ու լիովին պաշտպանված ե այն  
ճնշումից, վորը կապիտալիստական իրավակար-  
գում տնայնագործի քայլայման պատճառն ե-  
նանդիսանում: Ընդհակառակն, այսոր արհեստա-  
վոր կինն արտելների միջոցով և մեր արդյուն-  
աբերության հետ միասին՝ բանվորին ու գյու-  
ղացուն մատակարարում ե անհրաժեշտ ապ-  
րանքներ: Այսոր Հայտնարկուապի մանուֆակ-  
տուրան, Հայկուապի պահեստից սպառկուապի-  
ցանցը խլում են իրար ձեռքից: Խոկ ով ե այդ-  
ապրանքի արտադրողը, Բերված թվերից մենք-  
տեսնում ենք, վոր ջուհակների, գորգագործնե-  
րի և դերձակների խոշոր տոկոսը կազմում են  
կանայք: Բանվորուհու և գեղջկուհու արտադ-  
րանքն այսոր մեր սպառողները հեշտությամբ  
ձեռքից-ձեռք են խլում: Տնայնա-արհեստագոր-  
ծական արտելների ղեկավար մարմինների 57  
տոկոսը կազմում են կանայք, դրանց մեջ կան-  
նակ թրթուհիներ, վորոնք ակտիվ մասնակցում  
են այդ աշխատանքներին: Այդ աշխատանքն ա-  
վելի արդյունավետ ե դառնում նաև շնորհիվ  
այն հանգամանքի, վոր Հայտնարկուապի ցանցում  
աշխատում ե հատուկ կին-հրահանգիչ: Այդպի-  
սով տեսնում ենք, վոր տնայնագործական կո-  
ռպերացիայում կանանց մասնակցությունը տա-  
լիս ե լավ արդյունքներ:

## ԳԵՂՋԿՈՒՅԻՆ՝ ԿՈԼԼԵԴԺԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵջ

Գյուղի կոլեկտիվացման մեջ Հայաստանի գեղջկուհին կատարում ե իր խոշոր ու անփոխարինելի դերը։ Գեղջկուհու կոլեկտիվացումը կատարվում է հաստատ քայլերով ու լուրջ հիմունքներով։ Մեր ակտիվացած գեղջկուհին ակտում է հասկանալ գյուղի կոլեկտիվացման սոցիալիստական արժեքը և նա հետզհետե բռնել ե կոլեկտիվացման ուղին։

Կոլեկտիվ տնտեսությունների թիվը որըստորե աճում է Հայաստանում։ Այն ժամանակ յերբ 1927 թ. մեզանում ունելինք 8 կոլխոզ, վորոնք ընդդրկում ելին 390 անհատական տնտեսություն, 1928 թ. ունելին 96 կոլխոզներ, վորոնք ընդգրկում ելին 1942 տնտեսություն, այս տարի—1929 թ. հունվարին կոլխոզների թիվը հասնելու յե արդեն 110 ի, վորոնք ընդգրկում են 2117 տնտեսություն։ Պարզ ե, վոր գեղջկուհիների մասնակցության չափը կոլխոզներում համարյա հավասար ե տղամարդկանց մասնակցության չափին։ Մեր ձեռքի տակ չունենալով ձիշտ տվյալներ կոլեկտիվացած կանաց թվի ու սոցիալիստական գրության մա-

աին՝ վերջին խնդիրը կարելի յե մոտավորապես վորոշել այն տեսակետով, վոր ներկայումս մեր կոլխոզներն ունեն այսպիսի սոցիալական կազմ։ բատրակներ՝ 51,2<sup>0/0</sup>, չքավորներ՝ 75,5<sup>0/0</sup> և միջակներ՝ 18,7<sup>0/0</sup>։ Այդպիսով տեսնում ենք, վոր կոլտնտեսություններում գերակշռող դերը կատարում են բատրակներն ու չքավորները (81<sup>0/0</sup>-ը), Պարզ ե, թե վորքան նշանակալից ե չքավոր գեղջկուհիների մասնակցությունը կոլխոզներում։

Կոլտնտեսություննի առաջին համագումարն իր վորոշումների մեջ շատ քիչ տեղ ե տվել կոլեկտիվացած գեղջկուհու մասին։ Առանձնապես չի շեշտել գեղջկուհու կոլեկտիվացման ու ակտիվացման կազմակերպչական ձևերը։

Համագումարն առաջադրում ե «գործնական միջոցներ ձեռք առնել կոլեկտիվ տնտեսություններում ներգրավելու չքավոր և միջակ գեղջկուհիներին» (վորոնք իրենց տնտեսությունների ղեկավարներն են)։ Այդ նպատակի համար անհրաժեշտ ե ոգտագործել նաև կոոպերացման ու վարկավորման չքավորական ֆոնդերը կոլեկտիվ տնտեսություններում, ոժանդակել գյուղատնտեսության այն հատուկ ճյուղերի զարգացմանը, վորոնք նպաստում են տընտեսության ապրանքայինացման բարձրացմանը և

ուր պահանջվում ե գլխավորապես կնոջ աշխատանքը (թռչնաբուծություն, խողաբուծություն, պտղաբուծություն, շերամապահություն և այլն):

Այդ գորոշումն, ինչպես տեսանք, վերաբերում ե միայն այն գեղջկուհիներին, վորոնք հանդիսանում են իրենց տնտեսությունների զեկավարներ, բայց խոսք չկա այն գեղջկուհիների մասին, վորոնք կոլլեկտիվացած տնտեսության մեջ վայելում են տղամարդու պես հավասար իրավունքներ: Այս հանգամանքն անհրաժեշտ ե շեշտել, վորովհետև անհատական տնտեսության մեջ գեղջկուհու դերը խոշոր լինելով՝ համարյա նրանից ե կախված տնտեսության լիովին կոլլեկտիվացման խնդիրը: Բավական ե գեղջկուհին չուզի, տրամադրություն չունենա՝ կոլլեկտիվը գլուխ չի դա: Բավական ե կոլլեկտիվացած գեղջկուհին հիասթափիվեց, գործից ձանձրացավ ու գործն ատեց՝ կոլլեկտիվը յերկար կյանք չի ունենա, նա կքայլայի: Այս բոլորից պարզ ե, թե վորքան խոշոր ե գեղջկուհու մասնակցությունը կոլլեկտիվների մեջ: Կունու մասնակցությունը կոլլեկտիվների մեջ կոլլեկտիվ տնտեսության մեջ գեղջկուհու ակտիվացնելու և նրա աշխատանքն արդյունավետ դարձնելու համար պիտի ստեղծել այնպիսի նպաստավոր պայմաններ, վորոնք հեշտացնեն գեղջկուհու ընտանեկան գրադաստունքների ընթացքում ազատեն կոլլեկտիվիստուհիներին իրենց մանուկների խնամքից ու նման հոգսերից, վոր նրանք աղամարդու հետ միասին լծվեն իրենց տնտե-

ները, հետզհետե փոխեն նրա հին ու դաժան կենցաղը, ազատեն նրան յերեխայի ու խոհանոցի հոգսերից՝ կապելով գեղջկուհուն իր կուտնտեսության, իր կոմունայի հետ:

Այդ տեսակետից Լուսժողկոմատը և կոռպմիությունները պետք ե աջակցեն մեր կոլլեկտիվներին կուլտ-կենցաղային ձեռնարկների կազմակերպման գարծում: Մեր խոսքը վերաբերում է ճաշարաններին, թեյարաններին, մանկամուրներին, մանկապարտեզներին, մանկահապարակներին և նման կուլտ-կենցաղային հիմնարկներին: Մեր կոռպ-կենտրոններն իրենց կազմակերպված ու կազմակերպվելիք կենցաղային ձեռնարկները պետք ե ծառայեցնեն գլխավորապես կոլլեկտիվների կարիքներին: Այդ ուղղությամբ ձիշտ գիծ ե բռնել Հայկոռպը՝ վերցնելով իր վրա կոլլեկտիվների կուլտ-կենցաղային պատարգումը:

Այդ ձեռնարկներից ամենակարևորն ու գործնականը մանկապարտեզը և սեղոնային բացմանկամուրն ե: Այդ հիմնարկների աշխատանքն այնպես պիտի կազմակերպել, վոր նրանք գյուղատնտեսական զբաղմունքների ընթացքում ազատեն կոլլեկտիվիստուհիներին իրենց մանուկների խնամքից ու նման հոգսերից, վոր նրանք աղամարդու հետ միասին լծվեն իրենց տնտե-

սության՝ բարձրացնելով նրա արտադրությունը  
և խորացնելով նրա հիմքերը:

Հայաստանում կոլեկտիվ տնտեսություն-ների հետագա նվաճումները գլխավորապես կախումն ունեն այն բանից, թե յերբ և ինչ չափով գեղջկուհին կազմառարվի հին կենցաղից, թե թեանալով ընտանեկան հոգսերից ու պարտականություններից: Կոլեկտիվներում կուլտ կենցաղային ձեռնարկների ուժեղացումով կապահովենք գեղջկուհիների հասարակական աշխատանքը և նրանց լիովին ակտիվացումը:

### 10.

#### ԿՈՌԴԵՐԱՑՄԱՆ ԹԵՐԻ ԿՈՂՄԵՐԸ ՅԵՎ ՄԵՐ ԱՊԱԳԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Այդպիսով, տեսնում ենք՝ թե ինչ խոշոր նվաճումներ ե ունեցել Հայաստանի աշխատավորուհին 8 տարվա ընթացքում կոռպերացիա բոլոր բնագավառներում: Անշուշտ այդ նվաճումները գեւ չնչին են այն բոլոր անելիքների հանդեպ, վորոնք տարգում են Խորհրդային իշխանության կողմից կանանց ակտիվացման ու առաջքաշման ասպարեզում: Հետազում կոռպերատիվ շինարարության բոլոր ասպարեզների կենտրոնական տեղը պիտի գրավի բանվորուհին ու գեղջկուհին:

Ի հարկե, կոռպերատիվների մեր ղեկավար մարմինների մեջ կնոջ մասնակցությունն անկասկած աննշան ե: Մինչև այժմ սպառկոռպերացիան և գյուղկոռպերացիան իրենց ցանցում չունեն վոչ մի կին նախագահ: Դրա փոխարեն բանկոռպներում և գյուղկոռպներում մենք ունենք գործակատարուհիներ, վորոնք տարիները շարունակ իրենց «դախլից» հեռու չեն գնում: Պատահել են դեպքեր, յերբ բանվորուհին ու գեղջկուհին տարիներով աշխատում են կոռպերատիվում պրաքտիկանակայի անվան տակ և առաջքաշման ժամանակ վորպես ռանհամապատասխան ադատվում են պաշտոնից: Աշխատավոր կնոջ առաջքաշման հարցը սերտ կապված են առև նոր կագրերի հետ: Զնայած Յերևանի կոռպերատիվների կողմէ 120 հոգուց 29-ը (24,2 տոկոսը) կանայք են, բայց նրանց մեջ չնչին տոկոսն են կազմում բանվորուհիներն ու գեղջկուհիները:

Լենինգրադի, Մոսկվայի և Թիֆլիզի կոռպերատրագույն գպրոցներում Հայաստանից համու կենտ կանայք են սովորում: Ինչպես բոլոր ասպարեզներում կոմունիստական կուսակցությունը մտահոգված ե պատրաստել կին մասնագետներ (բժիշկներ, գյուղատնտեսներ, ուսուցիչներ) այնպես ել այդ բնագավառում ան-

հրաժեշտ ե ունենալ համապատասխան կին կո-  
ռպերապորների կադր:

Պատժողովներն իրենց հերթին պիտի ավելի  
լայն մասսայականացնեն կոռպ. գաղափարները:  
Բանվորուհու ու գեղջկուհու առողջ ինքնաքննա-  
դատության միջոցով անհրաժեշտ ե բացել կո-  
ռպերացիայի առորյա աշխատանքի բոլոր ցա-  
վոտ վերքերը: Ահա վորպիսի ինքնագործու-  
նեյություն և ակտիվ մասնակցություն ե պա-  
հանչկում այսոր Հայաստանի աշխատավորուհուց  
կոռպերապահիվ շինարարության հետագա նվա-  
ճումների համար:



576

ԳԻՆԸ 5 ԿՈՊ.